

մայրաքաղաքը Բրիւսէլը զեռ պատերազմի առաջին շաբաթում ընկաւ գերմանացիների ձեռքը։ Բելգիական կառավարութիւնը տեղափոխուեց Անտվերպէն, բայց ընկաւ և այդ նշանաւոր բերդաքաղաքը, որի պաշարումը մօտ մի ամիս տևեց։ Անտվերպէնի պաշարումից ազատուած գերման զօրքը արագօրէն արշաւեց դէպի արևմուտք, զրաւեց համարեա ամբողջ Բելգիան, վերցրեց Գենտ, Բրիւզէ և Օստէնդէ քաղաքները, չնայած որ վերջինը մի քանի օրուայ մէջ մի քանի անգամ անցաւ պատերազմող կողմերից ձեռքէ ձեռք։ Օստէնդէն ռազմազիտական շատ կարևոր նշանակութիւն ունի։ Վերցնելով այդ քաղաքը—գերմանացիք յենարան են ունենում Անզլիայի վրայ յարձակուելու։ Անզլիան կարծես նախազգուժ է գերմանիայի մտազրութիւնը և իւր կողմից պատրաստութիւններ է տեսնում՝ Մեծ Բրիտանիան և Լոնդօնը մասնաւորապէս պաշտպանելու գերմանական ցեպպելիւններից և թնդանօթներէրից։

Գ. Տէր-Ռուբինեան

1914, 18 հոկտ. ս. էջմիածին

Ի գիտութիւն ընթերցողների

Պարբերական թերթերում տպուեց, որ Վեհափառ Կաթուղիկոսը թոյլ էլտուելի փոխադրել յայտնի բարեգործ հանգուցեալ Ենօք Բուզաղեանի աճիւնը Բագուի գերեզմանատանից նորակառոյց Ս. Թաղէոսի և Բարդուղիմէոսի եկեղեցին։ Պարտ ենք համարում հաղորդել ի գիտութիւն ամէնքի, որ այդ թոյլտուութիւնը Վեհափառի կողմից եղել է ի հետևումն Շամախու թեմի առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսի և ծխական քահանայի յայտարարութեան, որով յայտնում են՝ թէ Բագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցու 1900 թ. չափաբերական մատնում, յօդ. արականաց 121, արձանագրուած է. Ենօք Բուզաղեանի թաղման մասին «Փամանակաւորապէս ամփոփեցաւ հասարակաց գերեզմանատան, առանց թաղման պատշաճաւոր կարգը կատարելու»։

